ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«13» սեպտեմբերի 2021 թ. N 144-Ա/1

## ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

2. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ դասընթացները կազմակերպել և անցկացնել հեռավար եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ դասընթացի

մասին հայտարարությունը (առանց խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով հաստատված խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված դասընթացի թեմաները և ուսումնական նյութերը տեղադրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքերում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց կենտրոնացված հաշվառման հերթականությամբ կազմված ցուցակները, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝

1) դասընթացն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացնել դասընթացն ավարտած մասնակիցների ցանկը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները:

2) մինչև սույն թվականի հոկտեմբերի 8-ը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացների վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանին:

9/10/2021

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

*Հավելված*

*ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի*

*2021 թվականի 13.09 N 144-Ա հրամանի*

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ

| Խմբի համարը | Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը | Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը | Դասընթացի անցկացման եղանակը | Դասընթացի անցկացման ժամկետը | Դասընթացի ծավալը |
|---|---|---|---|---|---|
| 6 | 13 | 1. Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, 1 ունկնդիր<br>2. Կոտայքի մարզ, Ակունք, 9 փ., տուն 3, 1 ունկնդիր<br>3. Կոտայքի մարզ, Ակունք, 10 փ., տուն 4, 1 ունկնդիր<br>4. Շիրակի մարզ, Գյումրի, Իսահակյան փողոց, 5Ա շենք, բն. 26, 2 ունկնդիր<br>5. Լոռու մարզ, Ալավերդի համայնք, 1 ունկնդիր<br>6. Սյունիքի մարզ, Կապան համայնք, 2 ունկնդիր | Հեռավար | 13.09.2021<br>29.09.2021 | 48 ժամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 7. Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, 1 ունկնդիր<br>8. Գեղարքունիքի մարզ, Ծովազարդ համայնք, 1 ունկնդիր<br>9. Երևան քաղաք, Էրեբունի վարչական շրջան, Մուրացան փողոց, տուն 142, 1 ունկնդիր<br>10. Երևան քաղաք, Էրեբունի վարչական շրջան, Նոր Արեշ 15 փողոց, շենք 3, բն. 23, 2 ունկնդիր | | | |